ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 738 - Ա

«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 350,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչությանը» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Անիթեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04230116) 2023 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N 2909 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անկողնային հավաքածուի, բարձերի և վերմակների ձեռքբերում՝ 61,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Առդելիկատես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02207495) 2023 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N 29/09/23 պայմանագրում նշված գործարքը, որով

նախատեսվում է մսամթերքի մատակարարում՝ 2,340,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2023 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թխվածքաբլիթի և շոկոլադե բատոնչիկի մատակարարում՝ 8,512,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Էյ Բի Սի Տեքստիլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04230372) 2023 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N 2909 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սրբիչների մատակարարում՝ 13,850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Պանդա Փափուկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01298623) 2023 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված՝ N 02/10/2023 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի մատակարարում՝ 21,950,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հայանտառ» ՊՈԱԿ «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02512343) 2023 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված՝ N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վառելափայտի մատակարարում՝ 5,328,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

20.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ